ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Ավետիսյան,

ի պատասխան Ձեր 27.05.2025թ. հ.120-2025թ. գրության՝ Մարիա Յակոբսենի փողոցի հ.3, 9, 9Ա և հարակից շենքերի տարածքից հեռացված աղբամանների վերաբերյալ, տեղեկացվում է, որ ըստ գործող սանիտարական նորմերի կենցաղային աղբահավաք կոնտեյներները տեղադրվում են բնակելի և հասարակական շենքերից ոչ պակաս, քան 15մ և ոչ ավելի քան 100մ հեռավորության վրա:

Մարիա Յակոբսենի փողոցի երկարությունը մոտ 300գծմ է: Նշված փողոցի լայնությունը սկզբնամասում և վերջնամասում այնքան նեղ է, որ երկու մեքենաներ միաժամանակ չեն կարող երթևեկել: Բացի այդ, փողոցում երկկողմ կայանում են մեքենաներ և աղբահավաք բեռնատար մեքենան հնարավորություն չի ունենում անցնելու և շրջադարձեր կատարելու, նաև աղբամաններ տեղադրելու համապատասխան վայր չկա: Մոտակայքում՝ Հյուսիսային Ճառագայթի փողոցում և Ազատության պող. թիվ 7 շենքերին հարակից կան աղբամաններ, որոնց հեռավորությունները փողոցի սկզբնամասից և վերջնամասից կազմում է մոտ 80 գծմ:

Տեղեկացվում է նաև, որ «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կողմից աղբամանների հեռացումն իրականացվել է բնակիչների բողոքների հիման վրա:

Միաժամանակ տեղեկացվում է, որ աղբամաններ տեղադրելու համար անհրաժեշտ է տվյալ շենքերի բնակիչների ստորագրահավաքը, որպեսզի աղբամանների տեղադրումը խնդիր չառաջացնի որևէ բնակչի համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ